պարհն, թէպէտ դժուարին է, թէպէտ նեղ եւ
անձուկ է, թէպէտ վիշտ է յանհաւատից, եր-
կիւղ յԱրաբացոց, հալածանք ի Տաճկաց եւ
այլն· այլ զի համեղ ես, ախորժ ես, հաճոյ ես 100
եւ լի շնորհօք ես եւ Տէր ի քեզ է միշտ եւ յա-
ւիտեան· մի, մի եւ մի սուրբ Երուսաղէմ, ըն-
տիր քաղաք եւ պատվական, սիրեցեալդ յա-
մենեցուն եւ գովեալդ յամենայնի, համբա-
ւեալ, հռչակեալ եւ փառաւորեալ, մեծարեալ 105
ի հայրապետաց, պատվեալ ի թագաւորաց:
Ո՞վ է որ զքեզ ոչ գովէ, ո՞վ է որ ոչ պատվէ·
զի դու ես փառք եւ պարծանք ամենայն աշ-
խարհի եւ ամենայն քաղաքաց մայր· ապաւէն
եւ յոյս ամենայն քրիստոնէից, մաքուր ա- 110
ղաւնի· եւ ինձ հիքոյս յոյժ բաղձալի· որ
բաղձամ, տենչամ եւ միշտ փափագիմ ի
մարմնի միւս եւս տեսանել զքեզ· կամ թէ
այլ ոչ հեռանալ ի քէն: Ով սրբութեանց
սուրբ, հոգիս իմ ըղձայ եւ ցանկայ տեսոյդ 115
քում բաղձալի: Արդ հեռանամք ի քէն սուրբ
մայր· զնամք, զատիմք, որոշիմք, բաժանիմք·
եւ երթայն մեր յոյժ սուդ եւ տրտմութիւն է
մեզ· եւ զրկիլս մեր, քաղցրի՛կ քաղաք, ի քէն
է ցաւ· եւ այնպէս է, որպէս զրկիլն Աղամայ 120
ի դրախտէն փափկութեան: Մի մոռանայր
զպաշտօնեայս քո եւ արժանի արա կրկին տես-
լեան քո:

98 յանձուկ... անհաւատից: — 99 արաբացոց:
— 108 ամենեցուն: — 109 ամենայնի: — 115 ըղձա: